ՍՈՒՐԲ ԳՐԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

ՀԻՍՈՒՍԻ ԸՆԾԱՑՈՒՄԸ ՏԱՃԱՐԻՆ

Երբոր նրանց սրբության օրերը լրացան, Մովսեսի Օրենքի համաձայն՝ նրան Երուսաղեմ տարան՝ Տիրոջը ներկայացնելու համար, ինչպես գրված էր Տիրոջ Օրենքում. «Ամեն արու զավակ, որ արգանդ է բացում, Տիրոջ սուրբը պիտի կոչվի»: Եվ Տիրոջ Օրենքում ասվածի համաձայն՝ ընծա տալ մի զույգ տատրակ կամ աղավնու երկու ձագեր:

ՍԻՄԵՈՆ ԾԵՐՈՒՆՈՒ ՄԱՐԳԱՐԵԱՑՈՒՄԸ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆԸ

Արդ, Երուսաղեմում Սիմեոն անունով մի մարդ կար, և այդ մարդը արդար ու աստվածավախ էր և ակնկալում էր Իսրայելի մխիթարությունը. և սուրբ Հոգին էր նրա մեջ: Եվ սուրբ Հոգուց հրաման էր առել մահ չտեսնել, մինչև որ տեսներ Տիրոջ Օծյալին: Նա հոգով [առաջնորդված]՝ եկավ տաճարը, և երբ ծնողները բերին Հիսուս մանկանը՝ նրա վրա կատարելու ինչ որ օրենքի սովորության համաձայն էր, [Սիմեոնը] նրան իր գիրկն առավ, օրհնեց Աստծուն և ասաց. «Այժմ, ո՛վ Տեր, խաղաղությա՛մբ արձակիր քո ծառային՝ ըստ քո խոսքի. որովհետև, աչքերս տեսան քո փրկությունը, որը պատրաստեցիր բոլոր ժողովուրդների առաջ. լույս՝ որ կլինի հայտնություն հեթանոսների համար և փառք՝ Իսրայելի քո ժողովրդի համար»: Եվ նրա հայրն ու մայրը զարմացած էին այն բաների վրա, որ խոսում էին նրա մասին: Սիմեոնը նրանց օրհնեց և ասաց նրա մորը՝ Մարիամին. «Ահա՛ սա կա՝ Իսրայելի մեջ շատերի անկման ու բարձրացման համար և նշան [է] հակառակության: Իսկ քո հոգու միջով էլ սուր պիտի անցնի, որպեսզի բազում սրտերից խորհուրդներ հայտնվեն»:

ԱՆՆԱՅԻ ՄԱՐԳԱՐԵԱՑՈՒՄԸ

Եվ այնտեղ կար մի մարգարե՝ Աննա [անունով]՝ Փանվելի դուստրը, Ասերի ազգատոհմից. սա տարիքով շատ առաջացած էր և ամուսնու հետ յոթը տարի էր ապրել՝ սկսած իր կուսությունից: Նա մոտ ութսունչորս տարեկան մի այրի էր, որ չէր հեռանում տաճարից, այլ պահեցողությամբ և աղոթքով գիշեր-ցերեկ պաշտում էր [Աստծուն]: Սա ևս նույն ժամին ոտքի կանգնելով՝ գոհություն էր մատուցում Տիրոջը և խոսում էր նրա մասին բոլորի հետ, որոնք Երուսաղեմի փրկությանն էին սպասում:

Եվ երբ ամեն ինչ կատարեցին Տիրոջ Օրենքի համաձայն, վերադարձան Գալիլիա, իրենց Նազարեթ քաղաքը: Եվ մանուկը աճում ու զորանում էր՝ լի իմաստությամբ, և Աստուծո շնորհները նրա վրա էին:

(Նոր Կտակարան, Մայր Աթոռ ս. Էջմիածին, 1969, Ավետարան ըստ Ղուկասի, էջ 184—186):